

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՒ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առիւթներից)

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատճառներից մի քանիսը.—ԵՆԲԻՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Արձագանքներ. Նամակ
խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներ-
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
մակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵ-
ՐԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Մարդագէտը

ՊԱՏՃԱՆՆԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ

Մեր երկրի գործարանական արդիւնա-
բերութեան ամենակոշոր առարկան, նաեւ
լը, յանկարծակի կորցրեց իր գինը։ Ամ-
բողջ ամառվայ ընթացքում նա ծախվում
էր 16—18 կոպէկով պուդը, իսկ այժմ
նա չէ կարողանում ծախվել 12 կոպէկով։
Ընկել է և գտած նաւթի, կամ կերօսի
գինը և այնքան ցած է ընկել, որ այլ ևս
անձեռնառն է գործարան բանեցնելը։ Վեր-
ջին շաբաթներում գործարանների մի մա-
սը արդ պատճառով դադարեցրեց իր գոր-
ծունէութիւնը եւ մշակների ամբողջ խմբ-
բեր մնացին առանց գործի։

Արդեւ շուտ կը վերջանայ այս նոր
ձեռնադրումը, թէ՛ նա երկար ժամանակվայ
անողութիւն պէտք է ունենայ, հաճախ
հարց, որ ինքն ըստ ինքեան առաջ է դա-
րին այն հազարաւոր անձանց համար, ո-
րոնք զբաղված են նաւթագործութեամբ
կամ կախում ունեն այդ արդիւնագործու-
թեան վիճակից։ Այդ հարցին բաւարար
պատասխան տալու համար բազմակողմա-
նի վիճակագրական ձեռք թուեր չը կան,
ուստի կարելի է միայն ենթադրութիւն-
ներ առաջ բերել։

Նաւթի գինը բարձրացաւ զխաւորա-
պէս այն պատճառով, որ զանազան տեսակ
գործարանների, ֆաբրիկների բազմանալու
և եղածների գործունէութեան ընդար-
ձակվելու պատճառով զգալից վառելիքի
մեծ կարիք։ Մոսկվայի, Վարշավայի, Լոն-
դոնի և ուրիշ գործարանական շրջանների ձեռ-
նարկողները, տեսնելով, որ քարածուխը,
փայտը և տորֆը չեն կարողանում բաւա-
րարութիւն տալ եղած մեծ պահանջին,
սկսեցին յոյս դնել նաւթի և նրա մնա-

ցորդների վրա, իբրեւ վառելանիւթի վրա։
Պահանջի մեծանալը առաջ բերեց նաւթի
գների բարձրացում, որ շարունակվում էր
մինչեւ ներկայ հոկտեմբեր ամիսը։ Վառա-
վարութիւնը արտօնութիւններ տուեց
քարածուխ ներմուծելու ուրիշ անգիւրից։
Քարածուխի հանքատեղերն էլ իրանց կող-
մից մեծ ծախքեր արին ընդարձակելու
իրանց արդիւնաբերութիւնը և իսկապէս
կարողացան աւելացնել քարածուխի քա-
նակութիւնը վաճառանոցում։

Այժմ վաճառանոցում վառելիքի վերա-
բերութեամբ նկատվում է փոփոխութիւն։
Այլ ևս պահանջը այնքան մեծ չէ, որքան
առաջ։ Գործարաններից շատերը տնտե-
սական ձգնաժամի պատճառով կրճատեցին
իրանց գործունէութիւնը, իսկ նրանց մի
նշանաւոր մասը բոլորովին կամ ժամանա-
կաւորապէս փակվեց։

Միւս կողմից նաւթի համաշխարհային
պահարկը համեմատաբար շատ մեծացաւ
վերջին ամիսներում։ Ամերիկայի և Բու-
մինիայի նաւթահանքերը միանգամից վա-
ճառանոց հանեցին նաւթի մեծ քանա-
կութիւն։ Ներօգտական շուկայում կերօսի
գինը ընկաւ։ Աւելացրեց այդ պատճառա-
ւորով և այն, որ պատերազմի պատճառով
Սև և Վիճիկիական ծովերի նաւա-
ւորմի մի մասը անկարող է նաւթային
ապրանքներ վերցնել Կովկասից, ուստի և
նաւթի պահարկները պէտք է մնան ամ-
բարկով, մինչև որ կարելի կը լինի նաւե-
րի վրա բեռնել նրանց։

Ահա մի քանի էական պատճառներ, ո-
րոնք ազդել և ազդում են նաւթի գների
անկման վրա։ Վարդ է այնտեղ մի փոքր
դեր կատարել գուցէ և բորսախաղը, բայց
եթէ տեղի ունի մի այդպիսի հանգամանք,
նա յամենայն դէպս ինքը չէ առաջ բերել
գների անկումը, այլ օգտվել է իրական
կեանքի տրամադրութիւնից՝ աւելի ևս
խտտացնելու երևոյթի արտայայտութիւնը։

Անկասկած նաւթի սպառումը տարեց
տարի աւելանալու է և նաւթը գտնելու
է գործարարութիւնի շատ տեղերում, ուր
նա մինչև այժմ դեռ մուտք չէ գործեր,
բայց դժուար կարելի է գուշակել թէ որ-

քան երկար կը տևի գների անկումը, որ
այժմ նկատվում է։ Մեր նաւթագործու-
թիւնը պէտք է իր հաշիւները հիմնի
նաւթի միջակ և ստորին գների վրա, որ-
պէս զի նա կարողանայ իր գոյութիւնը
պահպանել այն պայմաններում, որոնք
ձեռնառն են սպառողների մեծամասնու-
թեան։

ՆԵՐԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Արիստակէս եպիսկոպոսի «Քահանայական
խնդիրը», ինչպէս նախատեսում էինք, արդէն
առաջինների կրճատեց է բարձրացրել այն դասա-
կարգի մէջ, որի դէմ ուղղված էր նա։ Բնա-
կան էր փոխանակ ուղղվելու, փոխանակ ցնց-
վելու՝ առաջինը կրճատեցին հեղինակի դէմ։
Բայց կայ ընթերցող դասակարգը, աւելի
ստույգ, աւելի հեղինակաւոր և նա, լա-
ւաւօթ լինելով իրողութեան, լաւ իմանալով
աղէտի չափերը, վերաբերվում է գրքին իր
սեփական, անկախ տեսակետից և դատաստան
է անուամբ Կ. Պօլսի «Արեւելք» լրագիրը մի
քանի յօդուածներով ծանօթացրեց իր ընթեր-
ցողներին «Քահանայական խնդիր» բովանդա-
կութեան հետ։ Ահա ինչ խօսքերով են սկըս-
վում այդ յօդուածները։

Համբարձնեցի տողերով սկսած է Արիս-
տակէս սրբազան իր «Քահանայական խն-
դիր»-ը, որուն ընթերցումը մեզի համար
նոր ու բարոյական խորունկ ցնցում մը
յառաջ կը բերէ, այնչափ մանրակրկիտ հե-
տազօնութիւն մըն է դարաւոր ազդեցութեան,
երկրաբար զգծութեանց, եւ անոր արդեւ-
դութեանց, որոնցմով անարժան եկեղեցա-
կանութիւն մը հազուադէպ բացառութեամբ
քանիցս յանդգնած է եւ յարդ կը յանդգնի
պղծել իր փրօնն ու շուրջաւոր, ժողովրդին
ստեղծումը, նողկանքը եւ ի վերջոյ անար-
բերութիւնը արտադրելով դէպի ինչ որ նա-
խկան էր ու պաշտօնի։ Պրքին հեղինակը
աշխարհական մը չէ, եթէ այնպէս ըլլար
գուցէ արդէն ամբաստանութիւններու, զըր-
պարտութեանը ներքեւ ձգված կըլար։
1867-էն ի վեր, իր 22 տարեկան հասակէն
սկսելով Կովկասի շատ կողմերը առաջնորդա-
կան պաշտօններ վարած, տարիներով թիֆ-
լիսի առաջնորդ, ու վերջը էջմիածնի սինո-

դին անգամ, որմէ վերստին հեռուոր ան-
կիւն մը զրկած են։ Երիտասարդ ու սիրու-
ած գրիչներ արդէն մեզ ճանչցուցած էին
«Ամուսնական խնդիրներու» հեղինակը, բայց
«Քահանայական խնդիրը» իսկապէս դարա-
դուրս բացող գործ մըն է, հոսիական շուն-
չով ու Յորով և երեւիպով խառն, զոր
մարդ սիրող կտոր-կտոր ըլլալով կարգաւ կը
սկսի, եւ աչքը արցունքներու մէջ թաղուած
հազիւ կրնայ վերջացնել, կանգ առնել վերջ
ընդերկար իր վերջին տողերուն վրա, որոնք
պաղատազին աղօթք մըն են, Անուանութեան
ուղղութիւն։

Այսպիսի զգացմունքներ պիտի միախառն-
վին միասին, որպէս զի կապաւոր, անբա-
րեխիւրդ կղերականութիւնը վերջ ի վերջոյ
ստիպված լինի տեղի տալ ընդհանուր պա-
հանջին։ Եւ յօդուածագիրը լաւ յոյսեր ունի
ապագայի վերաբերմամբ։ Նա գրում է։

Մակար կաթողիկոս որչափ ալ հասկըցող
մէկը եղած ըլլար, կաշառակեր եպիսկոպոս-
ներու, բազմաթիւ անարժան պաշտօնեանե-
րու առեղ ցանցին մէջ ուրիշ կերպով կար-
ճեմք չէր կրնար շարժիլ։ Եւ ինչո՞ւ այդ
մեղմպումը չի գտնել նաեւ ներկայ ս.
Հայրապետին համար։ Եթեանաւոր չա-
տանց անցուցած ծերունի մը ինչ կարող
է ընել փութիւնը մինչև խորունկ խաւերը
թափանցած միաբանութեան մը եւ դարերէ
ի վեր հաստատված սովորութեանց հանդէպ։

Հէնց ցաւն այն է, որ «փութիւնը մին-
չև խորունկ խաւերը թափանցած» միաբա-
նութիւնը վերանորոգելու, կարգի ու կանօնի
տակ մտցնելու համար ոչինչ չէ անվում, թէեւ,
հաւատացած ենք, մի այդպիսի բարեկար-
գիչ հասարակութեան ամբողջ համարկութիւնն
ու ավակցութիւնը կուենար իր հետ։ Հէնց
ցաւալին այն է, առում ենք, որ «դարերէ ի
վեր հաստատված սովորութիւնները» այսօր
անսխալական են համարվում, պաշտվում են
իրեն կուռք եւ այդ բանի մէջ է որոնվում
փրկութիւնը։ «Արեւելքը» կարծում է, որ ե-
կեղեցական բարեշրջումը կատարվում է հետզ-
հետէ, քայլ առ քայլ։ Մենք էլ դիտենք, որ
այդպէս է ամեն մի առաջադիւթութիւն, գի-
տենք, որ ոստոններով առաջ չէ գնում ոչ մի
գործ։ Բայց հազիւ թէ այս համաշխարհային
օրէնքը մեզ իրաւունք տար լաւատես լինել
ներկայի վերաբերմամբ, ինչպէս այդ անում է
լրագիրը, ասելով։

Արիստակէս սրբազանի գոյութիւնը ապա-

պով ցած իջան կտուրներից, փակվեցին իրանց
խրճիթներում եւ ամբողջ շաբաթների առ ու
գողով լի գիշերներից յետոյ առաջին անգամ
հանգիստ քնեցին, աշխատելով չը մտածել յա-
ջորդ ամառվայ մասին։

Այն սարսափելի օրերից տարիներ են անցել։
Վաղուց փութ են Մուռ-Փարթի տանջված ու-
կորները, էլ նրա սուր անախտոժ ձայնը չէ
լսվում գիւղի փողոցներում, վաղուց այլ եւս
նախրի յետուսէն է երևում նրա կեղտոտ
պատկերը, ողորպոտող ու խաւար փողոցի
ծայրում էլ չէ երևում նրա դիւանակ խրճի-
թը, որ անձրեւների ջրերից վաղուց հողին է
հաւասարվել։ աղջիկներն էլ չը կան, մայրերը
կորցրած թոշին ձագերի պէս նրանք անյա-
տաջան, կորան, ով գիտէ ուր։ Մարդագէտի
առաջիններից զոգացող մանկութիւնն այժմ երկ-
րորդ սերունդ է գիւղում եւ սակայն սարսա-
փելի խրճիթ դեռ չէ գտնվել, չէ վառվել, նա
դեռ ցած է իջնում երկնքից թշուառ երկրի
վրա, գիւղերը դեռ գողում են, երեխաները յո-
շտվում եւ յայտնի չէ, թէ ճիշդ այդ արեւնոտ
խրճիթ փոխարէն մի փոքր լոյս, մի քանի կա-
թիլ փրկարար շող կիջնի Նդան բաշխների
եւ գիւղի մնացած խաւար գլուխների վրա,
երբ կը հասկանան այդ խղճալի գլուխները, որ
իրանք աշխարհ եկած չեն ցերեկ իրանց նման-
ների եւ գիշերը դադանների կերակուր դառ-
նալու համար, որ այդպիսի ճակատագիր չը
կայ, անգութ Աստուած չը կայ, որ մի ուրիշ
կեանք հնարաւոր է նաեւ իրանց համար։
Խնդհ, խաւար, անտէր գիւղ... Ինչ զանազալ
է ընթանում քեզ համար ժամանակը։

Ա. Անարոնեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԴԱԳԵԼԸ

(Պատկեր)

Շուտով կանայք մտան կիսախաւար, կա-
կածելի, նեղ փողոցը եւ երբ հասան Մուռ-
Փարու տան առաջ, մի գծի վրա շարվեցին, ի-
րար կողքի կանգ առան եւ նայում էին։ Այն-
տեղ խրճիթի կարէն ինչ որ կեղտոտ կոյտեր
էին երևում ցնցոտիների տակ։ Մուռ-Փարին
և իւրայինները քնած էին դեռ։

—Գեղն իրար է կպել, օրանց հէջ պէտքն է,
ասաց մէկը կամայով։

—Տեսնես առաւօտ «մարդագէտը» դարձել է,
թէ ոչ։

Կտրի կեղտոտ կոյտերը կամաց-կամաց շարժ-
վեցին։ Նրանց տակից, ինչպէս աղբակոյտերի
միջից դուրս ցցվեցին մի քանի ձիւնան գլուխ-
ներ, մի քանի կեղտոտ, կիսամերկ մարմիններ։
Նրանք ձգվեցին, տորիքներն աչքերը, այս ու
այն կողմ ուղղվեցին, եւ իրար ետեւից աչքերն
ուղղեցին դէպի փողոցը, դէպի կանանց շարքը
կէս զարմացած, կէս հետաքրքրված, չիմանա-
լով թէ բան ինչպիսի է։ Տեսարանը չափա-
զանց տարօրինակ էր։ Ներքեւից կանանց շար-
քը, վերեւից այդ զգուշի ձիւնան գլուխները
նայում էին իրար թունաւոր հայեացքով։ Յան-
կարծ կտուրի կեղտոտ գլուխներից մէկը բարձ-
րացաւ, ցցվեց իր չորացած, երկար ծածրմի
ամբողջ հասակով։ գիշերային շապիկ փոխարէն
ինչ որ կեղտոտ ձուկներ երկար երկար կախ-

ցոյց է մեր ըստ ինչի Ասկէ քառասուն տարի առաջ Մատթէոս կաթողիկոսի ժամանակ այդ գագաթնակէն ու լեզուով գրուած գիրք մը հեղինակին հերետիկոսութեան իբր ապացոյց՝ անոր եկեղեցիէն արտաքսուելը պիտի պատճառէր։ Այսօր ժամանակները փոխված են բոլորովին։ Արքիստակէս արքայան իր հետ ամբողջ երիտասարդ խորհուրդներու սիրտը եւ հոգին ունի։

Շատ էլ ճիշդ չէր լինի ենթադրել թէ այժմեան ժամանակ բոլորովին չը կայ հալածանք այնպիսի մարդկանց դէմ, որոնք համարձակվում են իրանց կարծիքն ունենալ։ Լրագիրը, եթէ աւելի մօտիկօց ծանօթ լինէր մեր կեանքին, կը ճանաչէր շատ խեղդված ու դուրս չարտփած անհատներ, որոնց ամբողջ մեղքը այն է եղել, որ նրանք «անյարմար» են համարվել ոչ միայն ջոջ հոգեւորականներին, այլ նոյն իսկ էջմիածնի անհորձ աստուածաբաններին բարեկեցութեան տեսակետից։ Միթէ Կ. Պօլսի լրագիրն յայտնի չէ թիֆլիսի Միքայէլեան փողոցի մի փոքրիկ տնակում վախճանված իտալական վարդապետը։ Եւ այդպիսի օրինակներ, որոնք վաւերացրել կը դառնան պատմութեան համար, քիչ չեն։ Երկրորդը, եթէ այժմ Մատթէոս կաթողիկոսներ չը կան, դրա համար չնորակալութիւն ժամանակին, որ առաջ է բերել հասարակական կարծիք, որ ջախջախել է կղերականութեան ասնձարձակ տիրապետութիւնը ու գործող անձի ոյժ է տուել ժողովրդին, որ բարձրակարգ պահանջում է եւ արդէն շատ զգալի փաստերով ցոյց է տուել թէ ինչպէս կարող է պատժել եւ վարձատրել իր հակակրօնականներով եւ համակրութիւններով...

Տիկին Մատակեանի մասը Կ. Պօլսի հայ մամուլին խորին ցաւակցութիւն է պատճառել։ Հանգուցեալ գործիչ կնոջ յիշատակին նշանակութիւնը են շատ համակրական յօդուածներ։ «Ուրախագիտել» լրագիրը, նկարագրելով թիւրքահայերի մանկական պարտէզների կամ «ծաղկոցների» հին, խաղաղական դրութիւնը, ասում է.

Ահա այս միջոցներուն էր որ տիկին Մատակեան Պօլսի կուգար Կովկասէն Գերման մեթոսները իւրացուցած ուսուսայ մանկավարժութեան տիտղոսը բաւական եղաւ ազդեցիւն մեր միտքերուն վրա։ Թերեւս անկէ շատ աւելի կարող մանկավարժներ ունէ՛լ չա՛նք մեր մէջ, ինչպէս օր. համար ողբացեալ Յակոբը Էտիւքանը, որ յիշատակելի անուն մը պիտի թողուր հայ խրճատիւն եւ ձեռնաստ մանկավարժ-ուսուցչներու շարքին մէջ։ Բայց մենք սովորութիւն չունենք ճանաչալ ինչ գնահատելի կարողութիւններ որ կան մեր մէջ։ Դուրսէն եկածը աւելի կարգէ մեր վրա։ Ժիշդ այս պատճառով անա, սիրով ընդգրկեցինք ինչ նորութիւն որ բերաւ տիկին Մատակեան մեր մէջ. ու լաւ ըրինք, որովհետեւ անոր բերածը օգտակար նորութիւն մըն էր։ Իր ուղղակի կամ անուղղակի հակողութեան տակ մանկավարժներ բացաւ։ Յեղբ, պարբ, լաւ հասկցուած զբօսանքը, մարմնամարզը, այսինքն կեանքը մըտաւ մեր ծաղկողներուն մէջ, որոնք անունի փոփոխութիւն մը միայն չունեցան «Մանկավարժներ» կոչուելով, այլ զբոսական հիմնական փոփոխութեան մը ենթակուցանալ։ Պարկները փոխանակ լալով վարժարան երթալուն ինչորով կը դիմէին հոն։ Առաջ վարժարանէն տուն կը փախչէին, այժմ սկսան տանք մէջ անհամբեր վարժարան երթալու ժամուն պատճառ։ Առաջ տղաքները իրենց գլխուն զարկածի վիճակ մը ունէին, ու Ա. Բ. Գ.-ը չէին կրնար սորվիլ, իսկ հիմա այն սիրուն մանկիկները կայտուն, ժպտուն, աշխոյժ, ստաք, Ա. Բ. Գ.-ին հետ ու անկէ խոյժ, առաջ կը են սորվիլ ուսման զանազան ճիւղերուն տարրական գիտելիքները։ Ահա տիկին Մատակեանի գործը։

Ո՛րպիսի գեղեցիկ գործ, կուեղայցինք մենք։ Երեխաների այդ իսկական բարեկամութեան անունը, անշուշտ, չի մոռացվի մեր մանկավարժական պատմութեան մէջ։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

XVIII

«Լոյս էր փնտռում եւ մահ գտաւ» — այսպէս է վերջանում Եւրոպիայի ամենագեղեցիկ պատկերներէ մէկը։

«Լոյս էր փնտռում եւ մահ գտաւ» սուտեւնածարաւ Չուրիւնով, որ զո՛ր բերեց իր կեանքը բարձրագոյն կրթութիւն ստանալու ցանկութեան։

Չուրիւնովներ համեմատաբար հազուադիւս տիպեր են, բայց սխալ չի լինի ասել առհասարակ լուրջ ուսանողի տիպի մասին։ «Լոյս էր փնտռում եւ տանջանքներ գտաւ», որովհետեւ լուրջ ուսանողներին հաճախ մեծամասնութիւնը Ռուսաստանում պատկանում է չքաւոր դասակարգին։

Այն անթիւ մանր անախորժութիւնները ու վերաւորանքները, որ ուսու համալսարանի չքաւոր ուսանողը տանում է ամեն օր, գրեթէ ամեն ժամ, անհկատելի է անցնում հասարակութեան համար, որի «ուշադրութեան դաշտը», ինչպէս ասում են հոգեբանները, — ընկած է լինում բոլորովին ուրիշ բաներով, բայց ամեն տարի գալիս է մի վայրկեան, երբ չքաւոր ուսանողներն էլ մտնում են այդ «դաշտ» մէջ, — հոկտեմբեր ամիսն է այդ, երբ համալսարանական վարչութիւնները սկսում են արձակել մինչ այդ ուսման վարձ չը վճարած ուսանողներին։

Այս տարի էլ կրկնվում է նոյն երեւոյթը։ Մայրաքաղաքի լրագիրները արդէն սկսել են արձանագրել այս կամ այն համալսարանից արձակված կամ արձակման վաճառքի ենթակայ ուսանողների բաւական մեծ թիւեր։ Այդ արձակվածների եւ արձակվելիքների մէջ կան անշուշտ եւ հայեր, որոնց օգնելու պարտականութիւնը ծանրանում է մասնաւորապէս հայ հասարակութեան վրա։

Որքան էլ իրաւացի կերպով դժգոհ լինի մեր հասարակութիւնը մեր ուսանողութեան մեծամասնութիւնից, այնու ամենայնիւ ոչ միայն անարտօնելի, այլ եւ անխոհեմութիւն կը լինի նրա կողմից անօրական թողնել այդպիսի մի ծանր բողբոջ ուսանողներին, որոնց մէջ երբեք չեն անյայտացել համակրելի տարրեր։

Օգնութեան արժանի են իսկապէս այդ համակրելի տարրերը եւ ոչ որ միջոց ունի ջոկելու համակրելիներին անհամակրելիներից կարող է հանգիստ խղճով սահմանափակել իր օգնութիւնը առաջիններով, բայց յանցանք եւ, կրկնում ենք, անխոհեմութիւն գործած կը լինի հասարակութիւնը, եթէ պարտականութիւն չը համարէ օգնել ուսանողութեան՝ այն պատճառով, որ նրա մեծամասնութիւնը բաղկացած է կամ վերջին ժամանակները բաղկացած է եղել ետականներից։

Հասարակութեան շահը պահանջում է, որ որքան կարելի է մեծ լինի ուսանողների թիւը։ Ժիշդ է, այդ նոյն շահը պահանջում է, որ այդ թիւի մէջ որքան կարելի է մեծ լինի եւ լաւերի տոկոսը, բայց դա ուրիշ հարց է, որ չի լուծվի, եթէ հասարակութիւնը իր անտարբերութեամբ թողն ցայտ, որ դուրս նետվեն համալսարանից չքաւոր ուսանողները, լաւ եւ վատ անխորժ։

Մարդասիրութեան եւ հասարակական ինքնապահպանութեան կրկնակի տեսակետից՝ աւելի լաւ է իզուր օգնել տաս ուսանողի, քան անօգնական թողնել մի արժանաւոր ուսանողի, յանձնի որի հասարակութիւնը կորցր է կորցնել մի ապագայ օգտակար մշակ, մի տաղանդ, թերեւս մի ազգային պարծանք։

S. Յ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 21-ին

«Մշակի» 196 համարի մէջ գետեղված էր մի յօդուած, որի մէջ ասված է «Թիֆլիսի Գաղութանց եկեղեցին մի քանի շահաւէր երէցիփոխների համար ապրուստի եւ հարստանալու միջոց է եղել եւ այնուհետեւ խօսքը մասնաւորվում է իմ երէցիփոխութեան վրա, չորի օրով անյայտացած է մի պատկանելի գումար» եւ թէ եւ ինչպիսիք են եղել մի ուրիշ մասնագետի ձեռքով կրկին ստուգելու իմ ներկայացրած հայիւնները, որոնք կազմված են եղել անկանոն կերպով։

Նախ պէտք է ասեմ, որ ես ոչ մի մասնագետի չեմ յանձնել կրկին ստուգելու իմ հայիւնները, եթէ յանձնել եմ, ո՞վ է եղել այդ մասնագետը, պ. յօդուածագիրը չէ կարող ցոյց տալ այդպիսին, որովհետեւ չէ եղել։ Դալով իմ «անկանոն» կերպով կազմած հայեւականների մէջ պակասած գումարին, այդ ծագել է իմ անփորձ լինելուց հաւապահութեան մէջ, որը իւրաքանչիւր բարեխիղճ մարդ պարզապէս կը նկատէ նրանից, որ ծխականների կողմից ընտրված հաշւաւորն պ. Յակոբեան իմ մատենների մէջ գտել է ոչ միայն պակասորդ գումարներ, այլ եւ աւելացած գումարներ մինչեւ չորս-հինգ հազար ռուբլու։ Եթէ ես գիտութեամբ գումարներ լինելի տակով արած, գտնէ հայիւններն մէջ դուրս բերած կը լինէի աւելորդ ծախսեր եւ ոչ թէ հինգ հաւաք մատենները պարզ գրած պակասորդ թւանշաններով կը տանէի, կը յանձնէի հաշւետեսներին։

Վերապէս, ինչ վերաբերում է պ. յօդուածագիր այն կէտին, թէ ես հարստացել եմ եկեղեցական գումարներով — դա կատարեալ անհիշելի թիւթիւն է, քանի որ նոյն իսկ նա ինքը իր յօդուածի վերջում գրում է թէ՛ «պ. Զալախան խոստանում է լրացնել պակաս գումարը»։ Կարող է արդեօք լինել խօսք գումարների իւրաքանչիւր հարստանալու մասին, երբ ես խոստացել եմ լրացնել պակաս գումարը, բայց դա կը լինի այն ժամանակը, երբ ծխականների

ժողովը կրնա ընտել իմ հաշւեմատենները հաշւետեսների ձեռքից եւ վերջնականապէս իր հայեացքը եւ կամքը կը յայտնէ։ Դրանից յետոյ, այո, ես պարտաստ եմ, եթէ հարկ լինի, իմ գոյքին վերջին թիւով լրացնել եկեղեցական գումարը։

Ուրեմն ի նկատի առնելով բոլոր վերեւ ասածներս, արդեօք հարկ կ'որ եկեղեցու չորս եւ կէս տարի անդադար ծառայողի գլխին վեր կենալ եւ ամենայն սարսափ թափել, թէ նա հարստանալու նպատակով է վարել այդ պաշտօնը եւ այլն եւ այլն, թողնում եմ դատելու ընթերցողներին։

Կ. Զալախան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 20-ին

«Մշակի» № 197-ի մէջ «Ջայն» ստորագրութեամբ «Գահաւայական ժողով» յօդուածում ասված է. «Ժողովականների մէջ երեւում էին եւ Ներսիսեան դպրոցի եւսուցիչ քահանաները»։

Ներսիսեան դպրոցի համար ընտրվելիք թէ աշխարհական եւ թէ քահանայ հոգաբարձուների ժողովները կատարվել են թիւսն արքայան ստանդարտից հարստարկված «կանոնների» տրամադրութեամբ, ուր յայտնապէս, որոշ յօդուածով արգելվում է դպրոցի ուսուցչին եւ իր մասնակցիլու ժողովին։ Որովհետեւ ես եւս Ներսիսեան դպրոցի քահանայ ուսուցիչ լինելու պատիւ ունեմ, ուստի եւ, մտքեր չը գալթակողելու համար՝ հարկ եմ համարում յայտնել, որ ես այդ ժողովին ներկայ չեմ եղել։

Սահակ քահանայ Սահակեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 21-ին, չաբաթ օր, Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրի գահակալութեան օրը, Սինի մայր եկեղեցում հանդիսաւոր պատարագ մատուցվեց, որից յետոյ գահադադարական մայրկնք կատարվեց։ Պատարագին ներկայ էին Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ, Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխան Գոյիցին, նրա օգնական գեներալ-լէյտենանտ Ֆրեդէ, բոլոր գեներալները, թիֆլիսի նահանգապետ Սվէշին, քաղաքապետը, քաղաքային եւ հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչները եւ բազմաթիւ աղօթողներ։ Քաղաքը առաւօտից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյան լուսավառված էր։

Շաբաթ, հոկտեմբերի 21-ին, Թագաւոր Կայսրի գահակալութեան օրը, Թիֆլիսի նոր բացված առեւտրական ուսումնարանում կայացաւ առաջին մանկական առաւօտը աշակերտների համար։ Դահլիճի փոքրութեան պատճառով հրաւիրված էին միմյան առեւտրի կօմիտեի անդամները, եւ ուրիշ ոչ ոք։ Տեսուչ՝ Մ. Օ. Ֆիշերի փորձառու գեղակալութեան շնորհիւ թէ ծրագրեր հետաքրքրական էր մանուկների համար եւ թէ կարգապահութիւնը օրինակելի Սկիզբն էր ժամը 2-ին։ Առաջին մասում, մոգական լապտերով համապատասխան պատկերներ ցոյց տալով պատմեցին՝ նախ՝ աշխարհագրութեան ուսուցիչ Օ. Բիբերգալ — Նիկոլայ II Կայսրի թագադրութեան մասին, եւ ապա ուսուցիչ լեզուի ուսուցիչ Ն. Բլաշով — ուսուցիչ առաւելաւոր Կրիլովի մասին։ Երկրորդ մասում աշակերտները կարդացին եւ երգեցին հետեւեալ կարգով. 1) «Տղէք, ուսումնարան գնացէ՛ք» եւ «Բնիկ, մանուկ» երգերը՝ ուսուցչին, 2) ջութակի վրա եւ եղանակ եւ մի դուէտ, 3) Կրիլովից երեք առակ, 4) առաւօտեան երգ հայերէն եւ ժողովրդական երգ վրացերէն, 5) երեք գերմաներէն ոտանաւորներ, 6) «A, B, C» եւ «Ջիւաւոր» գերմաներէն երգեր, 7) Ի վերջոյ՝ «Տէր պահեա գիւյսը» մանրէլ խմբով, մօտ 400 աշակերտ միասին։ Այս մասում նշանաւոր տեղ էին ընկնում հրաւիրված ջութակահարներ օր. Մերեմբլիւմ եւ նրա եղբայրը, գիմնազիօնի առաջին դասարանի աշակերտ, 10 տարեկան փոքրիկ Մերեմբլիւմ։ Իրանց սիրալի մասնակցութեամբ եւ նուազած կտորների գեղեցիկ կատարմամբ՝ Նրանք երկուսն էլ Թիֆլիսի Կայսերական կօմիտեի պատրիարք Մեթիւսի ուսուցչի Սերբուլովի մօտ են սովորում, որը եւ դաշնակցում էր նրանց պիանոյի վրա։ Ներկայ եղող աշակերտները, ըստ երեւոյթին, շատ հաւանքեցին մոգական պատկերները, ջութակների նուագածութիւնը եւ գերմաներէն աշխոյժ երգերը։ Պ. տեսուչը մտադիր է այս տեսակ կրթիչ հանդէսներ շուտ շուտ կրկնել։

Հոկտեմբերի 20-ին Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ կայացաւ յատուկ մի յանձնաժողովի նիստ, որը լրացրեց ցուցա-

հանդէսի ծրագրերը։ Ժողովին մասնակցում էին գործարանական արդիւնաբերութեան ներկայացուցիչներ։ Այդ ծրագրերը պէտք է ներկայացվի այն ընդհանուր ժողովին, որ կը կայանայ առաջիկայ կիրակի օր, հոկտեմբերի 29-ին, Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում եւ որին կը մասնակցեն զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներ։

Գրիգոր Զանչեանի անունը թափանցել է նոյն իսկ ասիական Թիւրքիայի խորքերը։ Ահա ինչ են գրում «Արեւելքին» Բալուից. «Բարեկիշատակ Զանչեանի տխուր մահադոյժը հոս ալ հասաւ. ազգային օրաթերթերում մէջ կարգաւորվ հանգուցեալին կենսագրութիւնը, մեծ ու պղծաւոր համակուցեան տխուր տպագրութեամբ, մասնաւոր որբանոցին փոքրիկ սանիկները, որոնք կարծես հայր մը կորսնցնելու բնազդով անհնարին թախմութեամբ առցեալ՝ ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ բնմին առջեւ գլխիկը շարուած ուշիկ ուշիկ մտիկ կընէին, երբ քահանան «Գիւղ գոտոյ ս. Աստուածածին» կիրակի առաւօտ փղծկեալ սրտով կը գուժէր ողբացեալ բարեբարին սրտածախի եւ տիրապիթ մահը ու կը թուէր անոր բարեմասնութիւններ ու ձիւրերը։ Զաչու գրէն յետոյ կաատրուեցաւ հոգեհանգստեան պաշտօնը. դըպիրները ողբաձայն երգեցին «Անսկիզըն Աստուած» հանգստեան շարականը, որուն կը ձայնակցէր պատարագիչ քահանան երիցս ինկարկելով ս. սեղանին առջեւ։ Պատարագէն ետքը ժողովուրդը մեկնեցաւ ողբացեալ Զանչեանցին մահուան տխուր ազդեցութեամբ»։

Վրաց «Կիւլի» շաբաթաթերթի տաւելով, պ. Մ. Բալանչիւիւնէ արդէն վերջացրել է առաջին վրացերէն օպերան «Եննգ Թամար» (Թամար ցիւրիքի), բովանդակութիւնը վերջորած է բանաստեղծ Ակակի Մերեթէիլի նոյնանուն գրամայից։ Օպերայի տպագրութիւնը յանձն է տուել անունին վրացիներից մէկը։

Կիրակի, հոկտեմբերի 22-ին, վրաց ազնուականութեան թատրոնում պ. Դալիկ իր խմբով ներկայացրեց յայտնի «Ուրիշ Ակոստա» պիէսան։ Դալիկի կատարում էր Ուրիշի դերը։ Շնորհալի զինարարի խաղը այդ երեկոյ շատ թղլ էր։ Այն պակասութիւնները, որոնք առհասարակ յատուկ են նրա խաղին, այս անգամ արտայայտվում էին աւելի եւս մեծ չափով, — չինծուրթիւն ողբերգութեան տեղ, ձայնի խաղտութիւն, միմիկայի պակասութիւն, եւ վերջապէս աչք ու յօնքի անտեղի շարժումներ, որոնք կոկետային բնուորութիւն էին տալիս զերեւանի գեղեցիկ գէժերի արտայայտութեան։ Մեզ թուում է առհասարակ, որ պ. Դալիկի աւելի ուշադրութիւն է դարձնում զիրենք, շարժումները եւ գէժի գեղեցիկութեան, բան խաղի բնականութեան եւ զգացվածութեան վրա։

Հիւսիսային Կովկասի եւ Սեւ ծովի շրջանի ծխախոտը այժմ վաճառահանվում է թէ գէպի Ռուսաստանի ներքին նահանգները, օրինակ Պետերբուրգի, Սոսկոլայի, Կիւբի, Սարկովի, Պոլտաւայի նահանգները եւ թէ արտասահման Անցեալ սեպտեմբեր ամսին Եկատերինոգրք քաղաքի վաճառանոցում ծխախոտի բարձր տեսակը արժէր պուղը 10—14 1/2 ռուբլի, միշակը 7—9 1/2, ստորինը 2 1/2—6 ռուբլի։

Կովկասում երգուեալների դատարան մտցնելու հարցի ճիշտութիւնը յետաձգված է անորոշ ժամանակով եւ լրագիրների մէջ երեւացած լուրը, ինչպէս հաղորդում է «Рыб. Вѣд.» լրագիրը, թէ այդ հարցը պէտք է ճշմիկ այս տարվա ընթացքում, զուրկ է որ եւ է հիմա քից։

Ժողովրդական լուսաւորութեան միմիստութիւնը մտադրութիւն ունի կազմակերպել ուսուցչական շրջող խմբեր այնպիսի տեղերում, որոնք հեռու են քաղաքներից։ Երջող ուսուցիչները պարտաւորութիւնը պէտք է լինի գլխաւորապէս կրկնութեամբ պարապել ժողովրդական դպրոցների նախկին աշակերտներին հետ։

ՂՈՒԲԱՅԻԾ մեզ գրում են. «Անպտեմբերի 29-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը Ղուբայի գիւղատնտեսական տան դահլիճում այդեղործական եւ գիւղագործական ցուցահանդէս բացվեց։ Ի ցոյց էին հանված զանազան պտուղներ եւ կանաչեղէն։ Երկու օր շարունակ նուագում էր այնտեղ պրաստունների գնդի մուգիկան։ Յուշադանդէս այցելողների թիւը երեք օրվայ մէջ

հասաւ չորս հարիւրի. էկսպոնէնտներ էին ութ մարդ Դէքտեր, Բէհրման, Դուրի, Դալ- ֆաւել, Դուրալի, այգեգործական դպրոց, Բալա- բէդ, Հասանբէգով, Հարուն բէգ, Զիգրիկովի եւ Զիգրիկ գիւղի տանտէր Բախալի Ալէկպէր օղլի: Պարգևներ էլ տրվեցին. փոքրիկ ար- ծաթեայ մէջակների արժանացան առաջին եր- կու պարտները: Ցանկալի էր, որ ամեն տարի լինէին այդ տեսակ ցուցահանդէսներ այստեղ, որոնք առաջ կը տանէին այգեգործական եւ գիւղատնտեսական դործը: Ցաւալի էր միայն, որ այս տարի այնպիսի խոշոր կալուածատէրեր, ինչպէս են Մատուրեան եւ Սարուսեան, չէին ծանակցել ցուցահանդէսին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ռայա, հոկտեմբերի 15-ին

Հոկտեմբերի 9-ին, առաւօտեան, մի անձ իրա- քանցում էր տիրում քաղաքի մէջ. ամեն կողմից վազվզում էին դէպի քաղաքապետի դուռը, ուր առանց այն էլ խորված էր ահալին բազմու- թիւն: Բանից դուրս եկաւ, որ նոյն գիւղերը մի քանի ֆարրաշներ (օտարկաններ) գիւղերով ժամի ժամ 10-ին հանդիպում են մի խումբ եւ- լիտասարդների փողոցում. դրանցից մէկը լի- նում է արեւադեցի մանկեղանակ կողակի շո- լերով, միւսը մի պարսկացած ուսու, եւ 2 հո- գի էլ ուսու գործաւորներ. ֆարրաշները, թուով մեց հոգի, չընկալաւորով նրանց, որպէս պատ- ժուած են, հարցնում են նրանց ով լինելը եւ թէ ինչ տեղի են դալիս, իսկ նրանք որպէս թէ յանդուգն պատասխան տալով անցնում են. ապա ֆարրաշները բռնելով նրանց, սկսում են ծծել, եւ երեւի, իրանց սովորութեամբ, դըր- պաններն էլ դատարկել: Այդ միջոցին ընկեր- ներից մէկը հանում է իր ընկերով դանակը եւ միտնութեան մէջ մի քանի հարուածներ հասցնում ու ազատելով վախճում. ահա այդ հարուածները մահ են պատճառում երեք հոգու: Դէպքը մի- անգամայն նոր լինելով Պարսկաստանի համար, մեծ իրարանցում էր առաջ բերել, մասնաւոր- երբ օպանիւմների դիմադրելը բերել էին դա- տարան, բայց որովհետեւ սպանութեան դործի մէջ խան էին եւ մի քանի ուսաներ, ամբողջ հայերի տեղ էր ընդունում նրանց եւ լարված էր հայերի դէմ, այնպէս որ այդ օրը մի չնչին դէպք կարող էր բռնկնել մի անձ խուզութիւն, ինչպէս քիչ էր մնում այդ ինձ հետ պատահէր: Նոյն օրը, կէսօրից յետոյ, եւ կանգնած էի մեր դասնեակի դռանը փողոցում եւ նայում էի անցուդարձ անողներին ու ձիապանին, որ ջուր էր տալիս ձիուն. այդ ժամանակ մօտեցաւ մի նիհար եւ ափսոսի չափազանց դործածութիւն- նից աչքերը խոր ընկած պարսիկ, նստեց դռան մօտ եւ դիմացի թէյալածանութիւն թէյ պահանջեց: Մինչդեռ վերջինս թէյը կը մատուցանէր, նա միմիջում էր ինքն իրան եւ ապա բարձրաձայն գոռում. «Բէնչ անարդարութիւն, ինչ կառավա- րութիւն, եթէ մի պարսիկ մի ֆարրաշ սպա- նած լինէր, այժմս նրա տունը-տեղը կրկն էին տուել եւ կին-երեխաներ կտորով, բայց մի գիւղերով մէջ հայերը երեք ֆարրաշի միանգա- մից սպանեցին եւ ոչ ոք ոչ մի դատաստան չարեց նրանց»: Եւ այսպիսի հազար ու մի տե- սակ զրպարտանք ու հայհոյանք հայերի հա- ցէին: Ես մի առժամանակ համբերեցի, բայց երբ տեսայ, որ նրա լրբ գրգռարտութիւնները սահման չունեն եւ որ երթեւեկողները կանգ- նում նրան լսում են եւ դա դառնում է մի տե- սակ պրօպագանդա անմեղ հայերի դէմ, բարկու- թեամբ դարձայ եւ մի քանի նախադիմա- ներ թափեցի նրա գլխին, ի միջի այլոց անեղով, որ հայերը երբեք այդ բանից տեղե- կութիւն չունեն եւ ի՞նչու է նրա զրպար- տութիւնը: Այս խօսքերիս վրա ամեն կողմից թափվեցին իմ գլխին. թէյալածանք թողեց իր ձեռքի բաժակը եւ հայհոյանքով վազեց դէպի ինձ, միւս կողմից անցուդարձ անողները հա- ւաքվեցին եւ յարձակվեցին ինձ վրա այս ան- ճերով թէ՛ «դու ինչպէս ես համարձակվում սէյդիդին հայհոյել»: Տեսնելով որ խնդիրը աւելի սուր կերպարանք է ստանում, դուռը բացեցի եւ ներս մտայ: Մի քանի ժամ կանգնեցին եւ հայհոյանքներ թափելուց յետոյ հեռացան: Իմ բաղդից, դուցէ եւ բոլորիս բաղդից, փողոցը բազմամարդ չէր եւ բացի դրանից հոգեւորա- կանութիւնը մասնակից չէր, որովհետեւ սպան- վողները քաղաքացիական վարչութեան ծա- նապոյններից էին, որոնց հակառակորդներն են հոգեւորականները:

Ճարարգործները մէկին, որ նոր պարսկա- ներ էր, բռնել են հէց նոյն օրը, միւս գիւղերը բռնաւոր խեղդամահ անել տալով երկրորդ:

առաւօտեան փողոցներում քարէքար էին անել տալիս, ամբողջ վրա սարսափ տարածե- լու նպատակով: Միւսները փախել են եւ ան- յայտացել: Երէկ լուր ստացանք, որ չարագործ- ներից մէկը՝ արեւադը, Թէհրանի ճանապարհին բռնվել է եւ քաղաքապետի հրամանով բերվել է քաղաք. թէ ինչ պատժ կը տրվի նրան, այդ կը տեսնենք, բայց աւելի հաւանական է, որ իր ընկերով վիճակին արժանանայ, քանի որ նա փախստական է, անցաթուղթ չունի եւ հաւանական է, որ ուսաց հիւպատոսը նրան չի պաշտպանի:

Քաղաքիս բնակիչները թիւը քանի գնում է աւելանում է, այնպէս որ բնակարանների մեծ պակասութիւն է դառնում: Ճարէց տարի 129- վում են այստեղ եւրօպացիներ, մասնաւոր յոյները, որոնք հետզհետէ իրանց ձեռքն են ձգում գործերը: Առաւօտական գններ են վճարում, հողեր գնում եւ բնակա- րան վարձում ու դրանով պարսկին տեղիք են տալիս իր ունեցած մի խողովակի եւ կամ մի քանի արլին հողի համար չը լսված կան կամ վարձ պահանջու: Նրանցից շատերն էլ իրանց բնակարանները տալիս են վարձով եւ ստացած վարձի 1/4 մասով տուն վարձում եւ ապա իրանք բնակվում: Ահա այսպիսով միան- գամայն դժուարացնում են աղքատ ժողովրդի ապրուստը:

Քաղաքն էլ կարծես հետզհետէ փոխվում է դէպի լաւը, նոր նոր գեղեցիկ տներ են շին- վում, այգիներ մշակվում, նոր եւրօպական մագազիններ բացվում եւ այլն, մի խօսքով այն, ինչ որ մի քանի տարի առաջ երազել մի- այն կարելի էր Մուշտի համար, այժմս իրական- նութիւն է, այն ինչ որ գտել, ճարել անկա- րելի էր համարվում, այժմս ճարվում է եւ այն էլ մեծ քանակութեամբ: Ամեն բան լաւ է դը- նում, բայց մաքրութեան դործը: Փողոցները թէնւ այժմս լուսաւորված են մասամբ, բայց աղբն ու կեղտը, ցեխն ու ջուրը չարունակ կայ եւ կայ: Զինուորական երաժշտութիւնը չա- բաթը մի քանի անգամ նուազում է քաղաքա- պետի դռան մօտ: Զինուորները ամենայն ա- ռաւօտ զօրավարութեան են գնում «աւարի- մէյդան» հրապարակում, որ չը տեսնված բան էր այստեղ: Քաղաքապետը, որ դնացել էր Բագու Շահին դիմաւորելու, անցեալ օրը, հոկտեմբերի 12-ին եկաւ այստեղ եւ, ինչպէս լսում ենք, շուտով գնալու է Ղազվին, այնտեղ Շահին դի- մաւորելու: Նրա հետ վերադարձել է նաեւ մաքսատների նախկին կապալառու, յայտնի «Բէկլար-բէկին», որը համարեն փախած ինձան էր, քանի որ ինչ-ինչ պատճառներով պաշտօ- նանկ լինելուց յետոյ յարգունիս գրաւեցին նրա կալուածները եւ վտանգ էր սպառնում նրա կեանքին: Այժմ, որպէս լսում ենք, նորից վե- րադարձել է Պարսկաստան՝ անգլիացիների ե- րաշխաւորութեամբ. թէ որչափ ճիշդ է դա, երաշխաւորել չենք կարող:

Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

— Բերլինից հեռագրում են «Рyse. Вѣд.» լրա- գրին. «Քաղաքական դրութիւնը այստեղ ամ- րացած է համարվում այն ժամանակից յետոյ, երբ պետութիւնները յայտնեցին իրանց համա- ձայնութիւնը անգլո-գերմանական դաշնագրի առաջին երկու կէտերի մասին: Պեկինից՝ լրա- գրից յետոյ յայտնի թղթակիցներից ստացված տե- ղեկութիւններին նայելով՝ այժմ դեպքանքները այնտեղ չարունակ խորհրդակցում են միմեանց հետ: Հաւանական է թւում այն տեղեկութիւ- նը, թէ պետութիւնների կրած վնասները վճա- րելու համար՝ առաջարկված է կրկնապատկել Զինատանում ներկայուած զոյուքիւն ունեցող մաքսային տուրքերը: Քառասուն միլիոն ֆունտ ստերլինգի թւանշանը, որով որոշվում է տու- րքանքի չափը, առ այժմ պէտք է ենթադրա- կան համարել:

— Նոյն լրագրին հեռագրում են Բերլինից. «Առեւտրականների եւ արդիւնաբոյնների շար- ժումը ընդդէմ խոշոր կալուածատէրերի, որ սկսվել է Բերլինից, տարածվում է այժմ Բա- ւարիայում: Բաւարական խոշոր վաճառաւոր- քաղաքները՝ Նիւրնբերգ, Ֆրիւտտա-հրատարա- կեցին յայտարարագրեր, որոնց մէջ ստեղծ է, թէ ժողովրդական շահերը պահանջում են, որ առեւտրական դաշնագրերը պահպանվեն եւ հաշտատիւնների մաքսային տուրքերը չաւե- րանան:

— «Labour Leader» լրագրում տպագրված է կէյր-Հարդի ուշադրաւ յօդուածը ընդդէմ Զեմ- րերէին: Յիշեցնելով իր յօդուածի սկզբում՝ այն բոլոր մեղադրանքները, որոնք վերջին ժամանակ յարուցված են գաղթականութիւն- ների միջնորդի դէմ, անգլիական պարլամեն- տում բանուորների միակ ներկայացուցիչը յայտնում է, թէ պարլամենտի բացումը յետա- ձգված է նրա համար, որ մի քանի անձնաւոր- ութիւններին ժամանակ տրվել համարում դի- մադրական կուսակցութեան ղեկավարներին,

որ նրանք չը պնդեն իրանց պահանջների վրա՝ պարզելու Զեմրերէի դիրքը մի քանի ձեռ- նարկութիւնների մէջ, կէյր-Հարդիի աւելով այս առաջին անգամը չէ, որ Զեմրերէին դի- մում է այդ միջոցին: Երբ իր ժամանակին չը- չանակվեց պարլամենտական յանձնաժողովը ընտելու համար այն հանգամանքները, որոնցից ծագեց Զեմրերէի արշաւանքը, բոլորը ապշած մնացին, որ յանձնաժողովը հրաժարվեց ճնշե- լու Chartered Company-ի ղեկավարի գրադու- թիւնը գաղթականութիւնների միջնորդութեան քարտուղարի հետ: Բայց, կէյր-Հարդիի աւելով, բանը բացատրվեց նրանով, որ այդ դործի մէջ չա՛հ ունեցողները դիմեցին «երբեակ չանտուկ»՝ «Եթէ ես կորչեմ—ասաց Զեմ- րոս Մէսիլ Բոգաին, երբ նա կապի դրա- թականութեան միջնորդ-նախագահ էր—այն ժամանակ ես ձեզ էլ քարշ կը տամ իմ ե- տնից»: Եւ դառաւարտութեամբ կը հետեւի եւ ձերքը—հեռագրեց Բոգա Զեմրերէին: Այս վերջինը հաւակացաւ, թէ ինչ պէտք է անել: Նա դիմեց Փայֆի դուքսի (Ուէլսեան իշխանի փեսայի) օգնութեան, որը մերձաւոր մասնակ- ցութիւն ունէր Chartered Company-ի մէջ: Այս ճարպիկ խաղը աղջկութիւն ունեցաւ. հեռա- խոյզով յանձնաժողովի բոլոր անդամները—թէ պահպանողականները եւ թէ ազատամիտները— համաձայնվեցին հրապարակ չը հանել այն վկա- յաթղթերը, որոնք դժուար դրութեան մէջ կը գնէին արքայական տան անդամներին: Իր յօ- դուածի վերջում կէյր-Հարդի ասում է. «Որով- հետեւ Զեմրերէին վախճում է լոյսից, ուստի եւ համարներին ժողովը կը հրաւիրվի միայն փետրվարին: Գաղթականութիւնների միջնորդը յոյս ունի, որ մինչեւ այն ժամանակ ամեն ինչ ստացված կը լինի: Ե՛հ, տեսնենք»:

— Պրանսիական լրագրիցներ հաղորդում են, թէ Տրանսիլաւի եւրօպական ներկայացուցիչը դիտար էկէյր մօտ օրերս առաջին անգամ, մի տարվա ընդհատումից յետոյ, հեռագրական հաղորդակցութիւն սկսեց նախագահ Կրիզէրի հետ: Նրանց մէջ հետեւեալ պայմանը կայա- ցաւ: Կրիզէր ափ կիլին Մարտէյլում, բայց այդ քաղաքում կը մնայ միայն մի օր եւ ապա կուղիւրվի Պարիզ, ուր երեւի կը հասնէ նո- յեմբերի 1-ին: Պարիզում նա կը մնայ երկու օր եւ բանակցութիւններ կը սկսէ ֆրանսիա- կան կառավարութեան հետ եւ յետոյ կը գնայ Հաագա՝ շտաբակալութիւն յայտնելու հօլլան- դական թագուհուն նրա համար, որ Հօլլան- դիան նրա արածագրութեան տակ դրեց «Ger- derland» դիւտորական նաւը: Հօլլանդիայից Կրիզէր նորից կը վերադառնայ Պարիզ, նա մտադիր է առաջարկել ֆրանսիական կառավա- րութեան, որ նա միջնորդութիւն յանձն առնէ՝ հաշտեցնելու Անգլիան Տրանսիլաւի հետ՝ յիշելով Հաագայի կօմիտեիցիայի դաշնագրի երրորդ յօդուածի վրա, որի զօրութեամբ անգ- լո-արաւսիլաւիան ընդգրկուած ենթարկվում է միջնորդ դատարանի: Մարտէյլում նախագահին կը դիմարեն եւ կողջանալով զանազան օտար- երկրեայ պատգամաւորներ, ի միջի այլոց եւ ուսու պատգամաւորներ:

— «Ստադէթ» լրագրին հաղորդում են, որ 50 տարեկան մի յոյն քահանայ Կ. Պօլսում մահանգականութիւն ընդունեց:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 հոկտեմբեր

ՊԵՏԵՐՐՈՒԹԻՐ, Հոկտեմբերի 20-ին կայար Ալէքսանդր III-ի մահվան տարեդարձի օրը Պետրօպոլիսի տաճարում տեղի ունեցաւ հոգեհանգիստ — «Правительственный Вѣст- никъ» հաղորդում է. «Չինական կանոնաւոր- ղորները, դեներալ Մայի հրամանատարու- թեամբ, բանակ են դրել Պատմիքուի հարաւ- արեւմտակողմում, ծղանչիժու քաղաքում եւ մաքրում են չրվականները մեծ-բուռնցները: Գինեւալ Իւանչիկայ 3000 մարդուց բաղկացած զօրաբաժնով գտնվում է Չղեժուում եւ նոյն- պէս հարձուծւում է բուռնցքամարտիկներին հո- ւսակները: Երկու զենեքաւորները մտադիր են գնալ դէպի Պատմիքու՝ նպատակ ունենալով մաք- րել ճանապարհները մեծ-բուռնցներից: Առ- հասարակ Պատմիքուի հարաւակողմում եւ Շանսիի նահանգում չրվում են մի քանի չինա- կան զօրաբաժիններ, որոնք ողնչացնում են խուզարարների վերջին հեռգերը:

ՄՕՍԿՎԱ, Արխանգելսկի տաճարում Կայար Ալէքսանդր III-ի մահվան տարեդարձի օրը հո- գեհանգիստ կատարվեց:

ՊԵԿԻՆ, Պրանսիական զօրաբաժինը, Սիլին հանելուց յետոյ, զբաւեց կայարունու դաժնա- րանը, գերմանական, իտալական եւ անգլիա- կան զօրաբաժինները եկան յետոյ եւ գրաւե- ցին ուրիշ դաժնարաններ: Պատմիքուից այժմ ստացված հեռագրեր ոչ մի կուր մասին տեղե- կութիւն չէ հաղորդում:

ԿԱՊԵՏՍԻ, Բօքերտ ուղեւորվում է Անգ- լիա նոյեմբերի 7-ին: Հաղորդում են, թէ բօքե- րները գրաւեցին Կօֆֆիֆօնան:

ԲԵՐԼԻՆ, Կայար Ալէքսանդր III-ի մահվան

տոթիթով՝ դեսպանատան եկեղեցում, դեսպանի, դեսպանատան անդամների եւ բազմաթիւ ուսու- ների ներկայութեամբ, հոգեհանգիստ կատար- վեց: Վաղը՝ Կայար Նիկոլայ II-ի գահակալու- թեան օրը՝ հանդիսաւոր ժամանացութիւն կը լինի եւ ապա տեղի կունենայ նախաճաշ ու- սաց դեսպանի մօտ:

ՇԱՆՔԱՅ, Պաշտօնապէս հեռագրում են Սինանֆուլից, թէ պրինց Տուան, Բուդապեշտի արեւալի շորեր հագած, փախաւ Մօնաքօլա եւ ժողովր է միանալ լաւաներին:—Հոկտեմբերի 18-ին քաղաքի արեւելած մասից կրակ բացին երկու ամբերկայի օֆիցերների վրա. երկուսն էլ անվնաս մնացին. յանցաւորները փախան Զինական տեղեկութիւններին նայելով՝ Լիւկու- նի եւ Զօնչեկեղուան մի իշխատակազմով ուղղած գահին, խնդրում են պատժել այն իշ- խաններին եւ միխտրներին, որոնք աջակցու- թիւն են ցուց տուել «Մեծ-բուռնցներ», որով- հետեւ ալլապէս պետութեան գոյութեանը վը- տանք է սպառնում: Նրանք աւելացնում են, թէ օտարերկրայ դորքերը, երեւի, գնում են դէպի Զօնչեկեղուան: Ապա հաղորդում են, թէ Զինին հրամայված է ուղեւորվել դէպի Պեկին:

ՏԵՍԼԱՅԻՆ, Պատմիքուի հիւսիս-արեւմտա- կողմում դաշնակից զօրքերը ընդհարումն ու- նեցան «Մեծ-բուռնցներ» հետ, որոնք կորցրին 21 մարդ:

ՊԵԿԻՆ, Դեսպանները շարունակում են քըն- նել այն առաջարկութիւնները, որոնք պէտք է առաջարկվեն Զինատանին: Պրանսիական առա- ջարկութիւնները վերջնականապէս ընդունված են: Ի նկատի առնելով պետութիւնների մէջ կայացնելը համաձայնութեան անհրաժեշտու- թիւնը՝ վերջնական յայտարար կարելի կը լինի յանձնել Զինատանին միայն մի քանի շաբա- թից յետոյ: Դաշնակից զօրքերը շարունակում են մաքրել երկիրը մեծ-բուռնցները: Պրան- սիական զօրաբաժինը դիմադրութեան հանդի- պեց Սեպչանում, Պատմիքուի հարաւակող- մում, եւ կորցրեց կուռն մի սպանված եւ 12 վիրաւորներ: Պրանսիական զօրաբաժինը գնաց դէպի Սիլին՝ դէպի կայսե- րական զերեկմանները եւ, լուրերին նայելով, այնտեղ դիմադրութեան հանդիպեց:—Պատմիքու- ֆուի մեծ-գահնապետը, թաթար նահանգապե- տը եւ մի չինացի գնաւորներ միջադպային յանձ- նաժողովը կողմից դատապարտված են մահվան պատժի, որ եւ չուտով կիրաւորվի:

21 հոկտեմբեր

ՏԵՍԼԱՅԻՆ, Երէկ մեծ քանակութեամբ ֆը- րանսիայի օֆիցերներ Շանչեյում նստեցին արտակարգ գնացքի վազօնը, որ նշանակված էր ամերիկական 14-րդ դուռը Տոնկու տեղա- փոխելու համար եւ հրաժարվեցին զուրս դալ նրանից: Գինեւալ Պէդէդը կանչեց անգլիա- ցիներին եւ ուժով հեռացրեց ֆրանսիացինե- րին. վերջինները զայրացած պահանջում են, որ ամերիկացիները ներողութիւն խնդրեն:

ՊԵԿԻՆ, Առաւօտեան տեղի ունեցաւ դես- պանների նիստը: Ասում են, թէ քննութիւնը սահմանափակվեց որոշելով այն համաձայնու- թեան մանրամասնութիւնները, որի հիմքն են կազմում ֆրանսիական եւ գերմանական յայ- տադրերը, որոնք, ապա, փոփոխութիւնների են ենթարկված: Բոլոր դեսպանների մէջ հա- մարաշխուժում է տիրում: Բանակցութիւններ սկսելու հնարաւորութիւն ունենալու համար, մնում է միայն-միակել միացած պահանջների որոշ ձեւ, որին հաւանութիւն տալին բոլոր կառավարութիւնները:

ՊԱՕՏԻՆՖՈՒ, Իտալական զօրաբաժինը փո- խարինց բրիտանական հեծանիւներին, որոնք ուղարկված էին պատժողական արշաւանքի: Մի քանի գիւղեր այրված են եւ շատ «մեծ- բուռնցներ» սպանված: Բրիտանական հե- ծեանները մի չրվախումը հասաւ իշխու, ա- ռանց դիմադրութեան հանդիպելու: Գերմանա- կան զօրաբաժինը հանդիպեց չրվախմբին կայ- սերական դաժնարանների արեւելեան դռների մօտ: Միջադպային յանձնաժողովը մահվան պատժի դատապարտեց զաւառական դատաւոր Տիեխանին, վան-Շէնզ հրամանատարին, դե- ներալ Կիուին եւ երկու ուրիշ աստիճանա- ւորներին: Բիչարդսոն բրիտանական զօրաբա- չի հետ սպանված է Լանֆանից հոկտեմբերի 15-ին: Գերմանացիները կը մնան այստեղ ձմե- րը իբրեւ քաղաքապաններ: Կարգադրութիւն է արած կործանելու վաղը այն տաճարը, որ առանձին սրբութեան հռչակ ունի:

ՄԱՆԻՐԻ, Այն խուզարկութիւններից յետոյ, որոնք կատարվեցին Պերալոս եւ Կասսա- սոյի մարդիկներին մօտ, բոլոր կարլիստական ժողովարարները փակված են. բռնված են փաստաթղթեր, որոնք սպաւորացանում են, որ

